

Պաշտոն: Ֆինանսական խորհրդատու

Աշխատանքի վայր: ք. Գավառ, Հայաստան

Աշխատանքային գրաֆիկ: Լրիվ դրույք

Աշխատանքի նկարագիր

Անելիք Բանկը փնտրում է հմուտ և բանիմաց Ֆինանսական խորհրդատու՝ մանրածախ բանկային պրոդուկտների գծով հաճախորդների ակտիվ ներգրավում իրականացնելու և վերջիններիս հետ համագործակցելու համար:

Աշխատանքային պարտականություններ

Մանրածախ բանկային պրոդուկտների գծով հաճախորդների ներգրավում, ակտիվ հաղորդակցում պոտենցիալ և ընթացիկ հաճախորդների հետ
Մանրածախ բիզնեսի գծով տնօրինության կողմից իջեցված վաճառքի պլանի կատարում
Մասնաճյուղի տարեկան բյուջեի մանրածախ վարկերի գծով սահմանված ցուցանիշների կատարման ապահովում
Հաճախորդների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն և վարկունակության գնահատում
Վարկավորման գործընթացի հետ կապված խնդիրների և/կամ խոչընդոտների լուծման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում
Վարկերի հնարավոր կորուստների պահուստների գործընթացի կազմակերպում և հետագա հսկողություն
Տրամադրված վարկերի նպատակային օգտագործման, դրանց ժամանակին վերադարձելիության և դրանց դիմաց հաշվարկված տոկոսագումարների մարման վերահսկողություն
Հաճախորդների ավանդային և այլ հաշիվների բացում, բանկային երաշխիքների տրամադրում, ինչպես նաև հաճախորդներին իրենց հաշիվների վերաբերյալ տեղեկանքների և կատարված գործարքների քաղվածքների տրամադրում
Մասնաճյուղի կառավարչի և մանրածախ բիզնեսի գծով տնօրինության կողմից ներկայացված ընթացիկ հանձնարարականների կատարում

Պահանջվող որակավորումներ

Բարձրագույն տնտեսագիտական/ֆինանսական կրթություն
1-2 տարվա աշխատանքային փորձը բանկային համակարգում /Փորձ վարկավորման ոլորտում
ՀՀ բանկային օրենսդրության իմացություն
Համակարգչային գիտելիքների լավ իմացություն (MS Office)
Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների լավ իմացություն

Ֆինանսական վերլուծության հիմունքների իմացություն
Հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություն
Թիմային աշխատանքի պատրաստակամություն
Տարբեր իրավիճակներում աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակություն

Չայտերի ընդունման վերջնաժամկետ: 10.01.2018

Դիմելու ընթացակարգ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու Անելիք Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@anelik.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ (subject) վերնագիր տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը:
Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները: